ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2025 թվականի N 1695 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 758-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի «Առգրավված, վերցված, կամավոր հանձնված կամ գտնված (այդ թվում՝ համապատասխանության սերտիֆիկատ չունեցող) զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը կամ ռազմամթերքը ոստիկանությանը փոխանցելու, դրանք ընդունելու և ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» N 758-Ն որոշմամբ սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տնտեսական վարչության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության (այսուհետ՝ տնտեսական վարչություն)» բառերով.

2) 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության փորձաքրեագիտական վարչություն (այսուհետ՝ փոր-

ձաքրեագիտական վարչություն) կամ մարզային փորձաքրեագիտական ստորաբաժանում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կամ դրա տարածքային բաժին (այսուհետ՝ կազմակերպություն)» բառերով.

3) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Կազմակերպությունում հետազոտվելուց կամ փորձաքննության ենթարկվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը փոխանցվում են ոստիկանություն, որից հետո խմբավորվում և պահեստավորվում են:».

4) 6-րդ կետի՝

ա. առաջին նախադասությունում «Փորձաքրեագիտական վարչության» բառերը փոխարինել «Կազմակերպության» բառով, իսկ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության» բառերը հանել,

բ. երկրորդ նախադասությունում «նախարարության ոստիկանության պետի» բառերը փոխարինել «նախարարի» բառով.

5) 8-րդ կետում «եզրակացության» բառը փոխարինել «դասակարգման» բառով.

6) 9-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տնտեսական և փորձաքրեագիտական վարչությունների» բառերը փոխարինել «տնտեսական վարչության» բառերով.

7) 12-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության» բառերը.

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19-րդ կետով.

«19. Զինապահեստ ընդունված զենքի ծառայողական նպատակներով օգտագործումը կամ կոմիսիոն վաճառքի հանձնումը կամ ոչնչացումն իրականացվում է սույն կարգին համապատասխան՝ բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, ծառայողական կամ օրենքով նախատեսված այլ իրավաչափ նպատակով օգտագործման հնարավորության և նպատակահարմարության հաշվառմամբ, զինապահեստ ընդունված՝

1) օգտագործման համար պիտանի զենքը, սպառազինության բաժնի աշխատակցի դասակարգման հիման վրա, ոստիկանության կողմից կարող է մալվել և պահվել մալած վիճակում.

2) օգտագործման համար պիտանի զենքը, սպառազինության բաժնի աշխատակցի դասակարգման հիման վրա, կարող է չմալվել և հաշվառվել սպառազինության մեջ՝ առանց ծառայողական նպատակներով օգտագործման.

3) օգտագործման համար ոչ պիտանի զենքը, սպառազինության բաժնի աշխատակցի դասակարգման հիման վրա, կարող է չոչնչացվել և պահվել այդ վիճակում։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ